



GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT

223 North Jackson St., Glendale, California 91206-4380

Telephone: 818-241-3111 • Fax: 818-548-9041

Մարտի 10, 2020թ.

Գլենդեյի հանրային դպրոցների կրթաշրջանի աշակերտներ, անձնակազմի անդամներ, ընտանիքներ և համայնքի անդամներ՝

Մենք բարձր ենք գնահատում ձեր համբերությունը ու համագործակցությունը, երբ կողմնորոշում ենք փնտրում COVID-19 (Նոր կորոնավիրուսի) եզակի և զարգացող իրավիճակի համար: Մենք շարունակում ենք գլխավոր առաջնայնությունը մեր աշակերտների և անձնակազմի առողջությանն ու անվտանգությանն կենտրոնացնել: Մենք այս պատասխանատվությունը վերցնում ենք շատ լուրջ, և շարունակաբար աշխատելով տեղական հանրային առողջապահական գործակալությունների հետ, մեր համայնքի համար արդի տեղեկատվություններ ենք ստանում: Այսօրվա դրությամբ, Գլենդեյ քաղաքում COVID-19- ի հաստատված դեպքեր չկան:

Մենք պարբերաբար հաղորդակցում ենք Լոս Անջելեսի հանրային առողջապահության բաժանմունքի, Լոս Անջելոսի կրթության վարչության, Գլենդեյ քաղաքի և մեր տեղական հիվանդանոցների հետ՝ մեր տարածքում ԶՆՎԻԳ-19-ի հնարավոր համայնքային տարածման տեղեկություններ փոխանակելու և նախապատրաստվելու համար: Մենք հրավիրել ենք տեղական արտակարգ իրավիճակների արձագանքման թիմերին և հիվանդանոցներին, մասնակցելու այս երեկո անցկացվող Գլենդեյի հանրային կրթության խորհրդի նիստին՝ տեղեկություններ փոխանցելու մեր համայնքի հետ: Այս հանդիպումը նախատեսված է երեկոյան ժամը 7:30-ին: Այն կարելի է դիտել [Glendale Unified website-ում](#) (Գլենդեյի հանրային դպրոցների կայքում): Նաև, հանդիպումից հետո մենք վիդեո հոյովակ կկիսենք մեր համայնքի հետ:

Գլենդեյի հանրային դպրոցները փակ են լինելու հաջորդ շաբաթ՝ զարնանային արձակուրդի համար, որի ընթացքում մեր միջավայրը խնամող անձնակազմը խստապահանջ մաքրություն է անցկացնելու բոլոր դպրոցական հաստատությունները, իսկ կրթաշրջանի աշխատողները կշարունակեն կատարելագործել մեր ծրագրերը, եթե դպրոցների փակման անհրաժեշտություն առաջանա: Գարնանային ընդմիջումից հետո, մենք կանոնավոր հաղորդազրույթություններ կուղարկենք մեր համայնքին, քանի որ COVID-19 իրավիճակը շարունակում է զարգանալ: Չնայած մենք չենք ակնկալում, որ մեր տարածքում լայնատարած դպրոցների փակումը ունենաք, բայց մենք պատրաստ ենք անհրաժեշտության դեպքում երկարացնել զարնանային արձակուրդը:

Եթե նախատեսում եք ճանփորդել զարնանային ընդմիջման ընթացքում, խնդրում ենք ստուգել [Centers for Disease Control \(CDC\) website-ը](#) (Հիվանդությունների վերահսկման կենտրոնի կայքէջ)՝ արդի տուրիստական խորհրդատվությունների համար: Այսօրվա դրությամբ, CDC-ն թողարկել է 3-րդ մակարդակի ճանփորդական նախազգուշացումներ՝ (խուսափել ոչ կարևոր ճանփորդությունից) Չինաստանի, Իրանի, Իտալիայի և Հարավային Կորեայի համար: ԱՄՆ վերադառնալուց հետո, այս երկրներից վերադարձող ճանփորդներին խնդրվում է 14 օր «մեկուսանալ» տանը: Մենք Գլենդեյի համայնքի անվտանգության համար կհետևենք այս խորհրդին և կպահանջենք աշակերտներից, ովքեր ճանփորդել են 3-րդ մակարդակի ճանփորդական նախազգուշացում ունեցող երկրներ, 14 օր մնան տանը: Նկատի ունեցեք, որ երկրների ցանկը կարող է փոխվել առաջիկա շաբաթների ընթացքում: Ճանափորդության պատճառով տանը մնացող աշակերտների համար, ծնողները կարող են խնդրել անկախ ուսումնառության պայմանագիր՝ զանգահարելով Գլենդեյի հանրային դպրոցների կրթական ծառայությունների բաժանմունք՝ (818) 241-3111 x1208 հեռախոսահամարով:

Մենք պետք է աշխատենք միասնաբար, մեր համայնքը առողջ և անվտանգ պահելու համար՝ պահպանելով լավ հիգիենա, իրազեկ լինելով արդիական տեղեկությաններին և պայքարելով կեղծ տեղեկությունների տարածման դեմ: Մենք կշարունակենք թարմացնել մեր [Glendale Unified website-ը](#) ([Գլենդեյի հանրային կայք](#)), ինչպես նաև մեր կրթաշրջանի [Facebook](#) և [Twitter-ը](#) էջերը՝ ընթացիկ տեղեկատվությամբ և ռեսուրսներով: Հուսալի տեղեկություններ ստանալու համար կարող եք այցելել [CDC](#) կամ [Los Angeles County Department of Public Health](#) [շրջանի հանրային առողջապահության](#) բաժանմունքի կայքերը:

Հարգանքներով՝



Վիվյեն Էքչյան, Ed.D.

Դպրոցների գերատեսուչ